ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝ Անժելիկա Ստեփանյան, ՀՀ ֆինանսների նախարարության պետական պարտքի կառավարման վարչության ռազմավարության և ռիսկերի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ,

2. Գործուղման վայրը և ժամկետները՝ Ավստրիա, ք. Վիեննա, 2023թ. օգոստոսի 14-ից 18-ը,

3. Հրավիրող կողմը՝ Համաշխարհային բանկ,

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝ մասնակցել «Պարտքի կառավարման կատարողականի գնահատումը պարտքի կառավարիչների համար» թեմայով աշխատաժողովին: Մասնակցության նպատակն էր ծանոթանալ Պարտքի կառավարման կատարողականի գնահատման (DeMPA) վերանայված մեթոդաբանության շրջանակին, ծածկույթին և կիրառմանը՝ նպաստելով պարտքի կառավարման կարողությունների ամրապնդմանը:

5. Քննարկված թեմաները.

1. Պարտքի կառավարման կատարողականի գնահատման մեթոդաբանության ընդհանուր բնութագիրը,
2. Կառավարման և պարտքի ռազմավարությունը, իրավական շրջանակը և կառավարման կառուցվածքը,
3. Պարտքի ռազմավարության մշակումը, պարտքի վերաբերյալ հաշվետվությունը և աուդիտը,
4. Կոորդինացումը հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների հետ,
5. Փոխառությունների և հարակից ֆինանսավորման գործառնությունները,
6. Կանխիկի հեսքերի կառավարումը,
7. Պարտքի հաշվառումը, վճարումը և գործառնական ռիսկերի կառավարումը,
8. Պարտքի կառավարման կատարողականի գնահատման գործընթացը,
9. Պայմանական պարտավորությունների կառավարումը,
10. Բարեփոխումների պլանի նախագծումը և իրականացումը:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Աշխատաժողովին մասնակցում էին 13 երկրների 26 ներկայացուցիչներ: Աշխատաժողովի ընթացքում Համաշխարհային բանկի ներկայացուցիչները ներկայացրեցին DeMPA վերանայված մեթոդաբանությունը, կիրառվող չափորոշիչները և դրանց հիմքում դրված պահանջները: Աշխատաժողովն ընթացավ ինտերակտիվ ձևաչափով՝ ուղեկցվելով թեմատիկ քննարկումներով և իրավիճակային վերլուծություններով: Աշխատաժողովի ընթացքում ներկայացվեց ՀՀ պետական պարտքի կառավարման համակարգը, մասնավորապես՝ կանխիկ հոսքերի կանխատեսման և կառավարման պրակտիկան: Աշխատաժողովն ամփոփվեց խմբային աշխատանքով, որի արդյունքում իրականացվեց հիպոթետիկ երկրի պետական պարտքի կառավարման կատարողականի գնահատում:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Աշխատաժողովի շրջանակներում որոշումներ չեն ընդունվել և փաստաթղթեր չեն ստորագրվել:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Համաշխարհային բանկի և Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից ՀՀ պետական պարտքի կառավարման կատարողականի վերջին գնահատումն իրականացվել է 2022թ. սեպտեմբերին՝ 2021թ. վերանայված մեթոդաբանության համաձայն: Աշխատաժողովին մասնակցությունը հնարավորություն կընձեռի վերհանելու վերոնշյալ գնահատման արդյունքում արձանագրված ցուցանիշների հիմքում ընկած գործոնները, ինչպես նաև մշակել կատարողականի բարելավմանն ուղղված համապատասխան միջոցառումներ:

9. Ստորագրությունը, ամսաթիվը՝

28.08.2023թ.